ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄ

Funded by the European Union

BLEJAN

Սևանա լճի հիմնախնդիրներ.

Եզրակացություն/առաջարկություններ

Ուսումնասիրելով Սևանա լճի հիմնախնդիրները, ու նրանց հետ կապված վերջին 5 տարիների ծրագրերը, կարող ենք հստակ ասել, որ դրանց լուծման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից քայլեր կատարվել են և շարունակվում են կատարվել, բայց արդյունքը տեսանելի չէ, քանի որ նախ, ծրագրերը գրեթե նույնությամբ կրկնվում են ամեն տարի և երկրորդ՝ այդ գործողությունները կատարվում են հատվածաբար, ոչ ամբողջությամբ՝ փուլ առ փուլ: Ու մինչև նոր միջոցներ են գտնվում շարունակելու նախկին ծրագրերն ու գործողությունները, նախորդի արդյունքը կորցնում ենք անփույթ ու անտարբեր վերաբերմունքի, ոչ լիարժեք պահպանության, վերահսկող մարմինների անտարբերության և այլ պատճառներով:

Օրինակ, վերոնշյալ բոլոր խնդիրների մասին ֆիլմ է նկարահանվել դեռ 2011թ.-ին «ԲԼԵՋԱՆ» ՀԿ-ի կողմից /կից հղումը՝ http://blejan.org/category/programms/film/?lang=hy /, սակայն արդեն 10 տարի է ոչ մի խնդրի լուծում վերջնական լուծում չի ստացել:

Աշխատաժողովին ներկայացված փաստերից (մանրամասները ներկայացված են կից «Հանուն Սևանի» տեսասահիկում) կարելի է կատարել հետևություններ.

Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող և ազգային առաջնահերթություն համարվող Սևանա լիճն ակնհայտորեն ենթարկվել և շարունակում է ենթարկվել էական վտանգների, որոնք կարող են հանգեցնել լճի հետագա գոյության, նրա էկոհամակարգերի, քաղցրահամ ջրի որակի և ռազմավարական պաշարների կորստի, կենսաբազմազանության խաթարման, ազգաբնակչության հանգստի կազմակերպման և երկրի զբոսաշրջության հնարավորությունների կրճատման և դրանց անդարձելի կորուստների:

Հաշվի առնելով վերոնշյալ հիմնախնդիրները, առաջարկում ենք.

1. կատարել ՀՀ կառավարության 18.12.2008թ. թիվ 1563-Ն «Սևան ազգային պարկ»-ի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» որոշման 10-րդ և 11-րդ կետերի պահանջներն ամբողջությամբ: Պարտադրել բոլոր վարձակալներին՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց, լողափերի կազմակերպման համար իրենց տրամադրված հողամասերից 20 տոկոս ազատ տարածք թողնել՝ ապահովելով հանրության կողմից լողափի անարգել օգտագործման հնարավորությունը, այդ մասին հստակ ամրագրել յուրաքանչյուր վարձակալի պայմանագրում:

2. Կատարել նույն որոշման 11-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված պահանջները, այսինքն արգելել լողափի գոտում բաժանիչ պարիսպների կամ ցանկապատերի տեղադրումը, ապահովել Սևանա լիճը շրջապատած բոլոր ցանկապատների քանդումը ու պայմանագրով պարտադրել բոլոր վարձակալներին Բուֆերային գոտում առանձին տարածքային հատվածներ սահմանազատել ուղղահայաց կանաչապատմամբ ցանկապատերի (մինչև 1,5 մետր բարձրությամբ) կամ բուսական պատնեշների տեղադրման միջոցով:

3. Առնվազն 1 (մեկ) տարով ամբողջությամբ արգելել Սևանա լճից ձկան որսը, որից հետո իրականացնել պաշարների հստակ գնահատում, այնուհետև որսագործիքների հստակ չափերի սահմանումով, հսկողությամբ ու վերահսկողությամբ թույլատրել արդյունագործական որս: Այն 2 հարց կլուծի. նախ մեկ տարվա ընթացքում կապահովվի բնական վերարտադրություն և հետո կունենանք լճում ձկան հստակ քանակ, որպեսզի հնարավոր լինի իրականացնել որսից առաջ և հետո ամենամյա հստակ հաշվարկ ու ոլորտն ամբողջությամբ բերել օրկնական դաշտ:

4. Լճից դուրս բերել բոլոր ցանցավանդակները, էնդեմիկ տեսակի վերարտադրությունն իրականացնել Կարճաղբյուրի գերժամանակակից վերամշակման գործարանում, որը նաև մայրական կազմ պահելու, վերատրադրություն իրականացնելու հնարավորություն ունի: 5. Հստակ գնահատել լճի բարձրացման հետևանքով ջրածածկվող տարածքները, ափերը նախապես պատրաստել բարձրացման՝ մաքրելով վերջին թուփն ու քարը/ապօրինի շինություններ/ և մինչև 2012թ.-ի ինտենսիվությամբ բարձրացնել լճի մակարդակը, որը լճի միակ փրկության գրավականներից է:

6. Պարտադրել սկսել Սոթքի հանքավայրի արդեն սպառված տարածքների ռեկուլտիվացման աշխատանքները

7. Օրենքով արդեն ամրագրված, այսուհետ խստիվ արգելել Սևանա լիճը սնող գետերի վրա ՀԷԿերի կառուցումը, իսկ արդեն գործողներն ապամոնտաժել, սկսելով Արգիճի և Դարանակ գետերից:

8. Անհապաղ ուժը կորցրած ճանաճել Ամուլսարի ՇՄԱԳ-ը և դադարեցնել Լիդիանի գործունեությունը ՀՀ-ում:

9.1 Աշխատանքներ տանել և ապահովել Որոտան-Արփա ջրատար թունելով ջրի տեղափոխումը Կեչուտի ջրամբար, որի միջոցով նախատեսված էր տարեկան լրացուցիչ ևս 165 մլն խմ ջուր հասցնել Սևանա լճին: Այդ ջրատարով՝ ըստ ականատեսների, բացման, գործարկման օրվանից՝ 26.04.2004թ, ոչ մի կաթիլ ջուր չի տեղափոխվել Սևանա լիճ: Միայն դրա գործարկումով, եթե տարեկան տեղափոխվեր թեկուզ 100 մլն խմ (165 մլն խմ-ի փոխարեն), ապա այդ ընթացքում Սևանա լիճը կարող էր ստանալ մոտ 1,5 մլրդ խմ լրացուցիչ ջուր, կամ մոտ 1,2մ լճի մակարդակ:

9.2 Տեխնիկական հնարավորություններ ստեղծել առցանց հետևելու Որոտան-Արփա-Սևան թունելով լիճ լցվող և լճից բաց թողնվող ջրի ծավալների չափերի վերահսկման աշխատանքներին լիիրավ և մշտական մասնակից դարձնել նաև բնապահպանական կազմակերպություններին: 10. Կատարել փոփոխություն «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքում ջրառի համար նախատեսված մինչև 170մլն խմ. Ջրբացթողումների չափաքանակը նվազեցնել դարձնելով 60մլն խմ., քանի որ գիտական հիմնավորումներով այն լրիվ բավարար է լճի ինքնամաքրման համար, իսկ ոռոգման համար ջրամբարների ջուրն էլ է բավարար:

9.3 Օրենքով արգելել աղբավայրերի այրումը, սահմանել մեծ տուգանքներ աղբահանությամբ զբաղվող ՀՈԱԿ-րի համար, որոնք աղբավայրերը ճիշտ չեն շահագործում, մինչև աղբի տեսակավորման անցնելու, կամ այրման գործարան կառուցելու:

10. Կառուցել կենսաբանական մաքրման կայաններ՝ հաշվի առնելով գետերի ամբողջ հզորությունը, կոյուղացնել բոլոր համայնքները, որոնց միջով գետեր են հոսում դեպի Սևանա լիճ:

11. Շարունակել և ավարտին հասցնել Սևանա լիճը՝ որպես բնության հուշարձան, UNESCO-ի հատուկ պահպանվող տարածքների ցանկում ընդգրկելու գործընթացը: Սևանա լճի հիմնախնդիրների ուսումնասիրությունն ու վերլուծությունն ամեն օր մեր ուշադրության կենտրոնում է լինելու, և այսուհետ նույնպես շարունակելու ենք այդ ուղղությամբ աշխատանքները: Քանի որ Սևանա լիճը մեր հոգատարության կարիքն ունի, քանի որ, եթե կորցնենք Սևանը, կորցնելու ենք *նաև Հայաստանը:*

«Քաղաքացիական հասարակության դերը բնապահպանական հարցերում որոշումների կայացման գործում» 3-րդ ԱԽ աշխատաժողովի թեմատիկ պանելային քննարկման պատասխանատու՝
Լիաննա Ասոյան,
«ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ նախագահ

Միջոցառումն իրականացվում է ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարության «Աջակցություն ՀԱՊ աշխատանքային խմբերի գործողություններին» ծրագրի շրջանակում: